ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 180

25 նոյեմբերի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 11 սեպտեմբերի 2006 թվականի, <<Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին>> N15 հրամանով հաստատված կարգի 3-րդ և 10-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայող՝ Աղավնի Առաքելյանի (ծածկագիր 3.2-1) ատեստավորումն անցկացնել ս/թ դեկտեմբերի 26-ին ժամը 12 –ին քաղաքապետարանի շենքում:
2. Օրենքով սահմանված կարգով տեղեկացնել նշված համայնքային ծառայողին և ատեստավորման հանձնաժողովի անդամներին:
3. Ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնել համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ